

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Գործողությունը	Հաղորդակցման եղանակները և միջոցները	Ակնկալվող արդյունքը	Կատարող մարմինը	Ֆինանսավորման աղբյուրը
			2022		
1.	Հակակոռուպցիոն ուժեղացման միջոցառումների իրականացման ընթացքի և դրա արդյունքում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ իրազեկման արշավների իրականացում	Հեռուստատեսությամբ, սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում գովազդային տեսա-հոլովակների հեռարձակում/ցուցադրում, սոցիալական ցանցերում, պաշտոնական կայքերում և զանգվածային լրատվության միջոցներում տեղեկատվական նյութերի հրապարակում	Հոլովակների միջոցով հասարակությունը տեղեկացվում է Հակակոռուպցիոն ուժեղացման իրականացման արդյունքում կատարվող բարեփոխումների վերաբերյալ:	Արդարադատության նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված աղբյուրներ
2.	Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ	Իրազեկող տեսա-հոլովակների հեռարձակում (ցուցադրում) կամ տեղեկատվական նյութերի	Հանրային իրազեկման արշավների արդյունքում հասարակությունը տեղեկացվում է՝	Արդարադատության նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

		հրապարակում սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում	<ol style="list-style-type: none"> 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ընթացիկ գործունեության մասին: 2. Հակակոռուպցիոն կոմիտեի ընթացիկ գործունեության մասին: 3. Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ուղղությամբ իրականացված աշխատանքների մասին: 4. Հակակոռուպցիոն դատարանների գործունեության մասին: 	<p>Գլխավոր դատախազություն (համաձայնությամբ)</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</p> <p>Հակակոռուպցիոն կոմիտե (համաձայնությամբ)</p> <p>Բարձրագույն դատական խորհուրդ (համաձայնությամբ)</p>	
3.	Կոռուպցիայի կանխարգելման և հակազդման մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ	Իրագեկող տեսահոլովակների հեռարձակում (ցուցադրում) կամ տեղեկատվական նյութերի հրապարակում սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում	Հրապարակվում և/կամ հեռարձակվում են տեղեկատվական նյութեր և հոլովակներ հետևյալ թեմաներով՝ <ol style="list-style-type: none"> 1. Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մանդատը և վերջինիս լիազորությունների շրջանակը. որ դեպքերում և ինչ հարցերով պետք է դիմել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին: 	Արդարադատության նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

			2. Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատը և վերջինիս լիազորությունների շրջանակը. որ դեպքերում և ինչ հարցերով պետք է դիմել Հակակոռուպցիոն կոմիտե: Նշվածը ներկայացվում է կոռուպցիոն հանցագործություններից յուրաքանչյուրի մասով առանձին դեպքերի (իրական կամ մտացածին) օրինակով:		
4.	Գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով վերապատրաստումների և սեմինարների անցկացում	Վերապատրաստումների և սեմինարների իրականացում	<p>1. Ընտրվել են այն մասնավոր ոլորտները, որտեղ պետք է անցկացվեն վերապատրաստումներն ու սեմինարները:</p> <p>2. Մշակվել են վերապատրաստումների և սեմինարների թեմաները, դրանց անցկացման կարգն ու ժամկետները:</p> <p>3. Ընտրված մասնավոր ոլորտում իրականացվել են վերապատրաստումներն ու սեմինարները, որոնց արդյունքում մասնավոր ոլորտի աշխատողները տեղեկացվել են՝ ինչ է կոռուպցիան, ինչ իրավունքներ ու պարտականություններ ունեն իրենք կոռուպցիոն ռիսկեր պարունակող երևույթներ նկատելիս:</p>	<p>Էկոնոմիկայի նախարարություն</p> <p>Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ)</p> <p>ՀՀ արդարադատության նախարարություն</p> <p>Բարձրագույն ուսումնական հաստատություններ (համաձայնությամբ)</p> <p>«Կորպորատիվ կառավարման</p>	Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

				կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) Հասարակական կազ- մակերպություններ (համաձայնությամբ)	
5.	Պետական մարմինների մամուլի քարտուղարների կամ հասարակայության կապերի մասնագետների և լրագրողների համար կոռուպցիայի դեմ պայքարի թեմայով վերապատրաստումների և սեմինարների անցկացում	Վերապատրաստումների և սեմինարների իրականացում	1. Մշակվել են վերապատրաստումների թեմաները: 2. Անցկացվել է առնվազն 1 վերապատրաստում հետևյալ խումբ անձանց համար՝ 1) պետական մարմինների մամուլի քարտուղարներ կամ հասարակայության կապերի մասնագետներ. 2) զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ: 3. Հրավիրվել են պետական մարմինների ներկայացուցիչներ հակակոռուպցիոն ոլորտում կատարված աշխատանքի, հիմնական խնդիրների և այլ հարցերի վերաբերյալ զեկույցներով հանդես գալու համար:	Արդարադատության նախարարություն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (համաձայնությամբ) Հասարակական կազ- մակերպություններ (համաձայնությամբ)	Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ
6.	Ազդարարման համա- կարգի և ազդարարման	Տեղեկատվական նյու- թերի հրապարակում սոցիալական ցանցերում,	1. Ազդարարման դեպքերի վիճակագրության ներկայացում սոցիալական	Արդարադատության նախարարություն	Օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ

	մեխանիզմների վերաբերյալ տեղեկատվական նյութերի հրապարակում	զանգվածային լրատվության միջոցներում	ցանցերով/զանգվածային լրատվության միջոցներով (առնվազն 1 անգամ):		
7.	Հանրային իրազեկում իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ www.e-draft.am հարթակի, ինչպես նաև դրանից օգտվելու կանոնների մասին	Սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում տեղեկատվական նյութերի հրապարակում	<ol style="list-style-type: none"> 1. Մշակվել է տեղեկատվական նյութ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի՝ www.e-draft.am-ի և դրանից օգտվելու կանոնների մասին: Նշված տեղեկատվական նյութն ամսական առնվազն մեկ անգամ հրապարակվում է սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում: 2. Միննույն ժամանակ ներկայացվում են թիրախային հանրային կարծիքի օրինակներ, որոնց հաշվառմամբ արդյունավետ կարգավորումներ են նախատեսվել: 	Արդարադատության նախարարություն	Օրենսդրությանը չարգելված այլ աղբյուրներ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ